ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային, կենցաղային, տնտեսական ապրանքների, ՀՀ զինանշանների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» դեկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի և «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

Կարեն Պողոսյան Ա/Ձ-ն և «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները (Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված Հավելված N 1.3-ը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերության պահանջների համաձայն, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է):

Հանձնաժողովը որոշեց.

Կարեն Պողոսյան Ա/Ձ-ի և «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգը 27-րդ, 31-րդ և 34-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով Հպարտ Քաղաքացի ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 32-րդ չափաբաժինների մասով «Կոմուս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 22-րդ չափաբաժնի մասով ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 28-րդ չափաբաժնի մասով ԱՆՆԱ ՄԱՆԴԵԼ ԱՐՈՆԻ ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 29-րդ չափաբաժնի մասով Կարեն Պողոսյան Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 30-րդ չափաբաժնի մասով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 33-րդ չափաբաժնի մասով ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 35-րդ չափաբաժնի մասով Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 28-րդ, 29-րդ, 35-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով գնման ընթացակարգը 27-րդ, 31-րդ և 34-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան